

ԲԱԺՆԵԳԻՆ

Ի Պուլկարիա

Տարեկ. 10 ֆր.


Վեցամս. 5 "

Արտասահման

Տարեկ. 12 ֆր.

Վեցամս. 6 "

ԿԱՆԻՍԻԿ



ՊԵՏՄԵՆՔ

Գրութիւնք ետ
չեն տրուիր:

Հասցէ

DIRAN
PAPAZIAN
YILDIZ TABIA
VARNA
BULGARIE

ՇԱՐԱԹԱՅԱՆԴԵՍ. ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱԻԵՇՏԱԿԱՆ

Դ. ՏԱՐԻ

ՅՈՒՆԻՍ 24 ՇԱՐԱԹ 1900

ԹԻԻ 167

ԴԵՐԱԿԱՏԱՐՆԵՐԸ

Ա.

Զաւեշտին վարագոյրը բացուեցաւ:

Դէմ դէմի բեմին վրայ են նոր սերունդին ամենէն տիրացու տարրը և ապագայ սերունդին ամենէն կարեւոր մասը:

Շաբաթը, զոր կը վերջացնենք այսօր, գրեթէ բոլոր Պուլկարահայ ազգային կամ մասնաւոր վարժարաններու քննութեան շաբաթն է, ուր տենդոտ ոգեւորութեամբ մը սկսեցին արգէն հին, շատ հին բանաձևի մը վերակրկնումներովը զաւեշտին ամենէն զլուելի տաղտուկին մատնել հանգիստեանները, եթէ կան:

Այո, ինչպէս հերու, նոյնպէս և այս տարի միևնոյն թիվի կեղծաւորութիւնն է որ վարժապետներուն դարձդարձիկ աչքերուն մէջ քարացած՝ ամբողջ սերունդի մը բարոյական փճացումին վրայ կը նային անսիրտ սառնութեամբ ու իրենց զոհերուն տանջանքը կը բազմապատկեն այն սովորական հարցումներով, որոնք պէտք է ըլլան կամ շատ անխմստ և կամ շատ կանուխէն պատրաստուած:

Ու միևնոյն անդիտակից ու ողորմուկ նայուածքներն են, որ զոհերուն կողմէ ալ կ'ուղղուին շէպի իրենց պատուելիները, կարծես բացագանչելու համար ծէր, եթէ հնար է, անցո՛յն յինէն զբաժակս այս:

Եւ իրաւ որ զաւեշտէ աւելի մարտիրոսութիւն մըն է որ կը կատարուի այդ բեմին վրայ: Ապացոյց կ'ուզէք. ըսած ենք ու կը կրկնենք թէ Պուլկարիա ազատագրուելէ ի վեր թերեւ մէկ քանի միլիոններ ծախսուած է հայ կրթարաններու

համար այն դրութիւնով, ինչով որ գեռ մինչև այսօր կը ծախսենք ու արդիւնքը եղած է միշտ ոչինչ ու ոչինչ. . . .

Այս պարզ ու պերճախօս հաշուետուութեան մորմոքիչ ազդակը ինչպէս առաջ, նոյնպէս և այս անգամ վստահ ենք թէ անարձագանք պիտի մնայ եւ գեռ շատ մը տարիներու համար պիտի դոցուին ու վերաբացուին բեմերը, ուր դէմ դէմի պիտի ըլլան միշտ մեր պատուելիները իրենց խղճալի զոհերուն հետ: Այո, գիտենք թէ Պուլկարահայ ժողովուրդը տակաւին չպիտի ուշաբերի և ինք իր ձեռքով պիտի շարունակէ նոխազներ ընծայել այդ բեմին արահամեան ողբալի համակերպութեամբ մը:

Ու մտածել, որ այս մարտիրոսական հոգեմաշ քաջքուքին դերակատարները դժբաղդաբար մէկ դասակարգի չեն պատկանիր, ահա ամենէն յաւալին:

Վարժապետները չեն միայն որ մեր վարժարանական յաւիտենական ամբլթիւնը կը յաւերժացնեն, ատոնք իրենց կաշին քաջքշելու նեղ մտածումով, շատ աղէկ դիտցած են նաև տեսակ տեսակ հմայիչ շողոքորթութիւններով օգտուել իրենց շուրջի պաշտօնական մարմիններէ, իրենց չափ պատասխանատու եղած վնասին: Պաշտօնական մարմիններն ալ ծնած են ժողովուրդէն և կամ աւելի ճիշդը աղոց ծնողքներէն, և այսպէսով ծնողք, պաշտօնական մարմինն ու վարժապետ թե թեի տուած ստեղծած են իրաց այս ողբալի վիճակը քառորդ դարէ մը ի վեր:

Կարժէ ուրեմն որ մեր խօսքը քիչ մըն ալ ծընողքներու ուղղենք և ցոյց տանք իրենց կատարած դերին ահաւիտութիւնը:

Կ'անդրադառնանք ուրեմն իրենց յաջորդով:

ԾԱՆՕԹ

ԱՉԳԱՅԻՆ



(Այսօրուան Թղթարներ)

— Թուրքիոյ Դատական նախարարութեան կրօնական գործոց տեսուչի օգնական Պէհաէտտին պէյ որ Սոյի Կաթողիկոսին ընտրութեան պաշտօնով Ատանայ կը գտնուէր, ետ կանչուեր է

— Վանայ այցելու հովիւ Տ. Ներսէս եպիսկոպոս Ասլանեան կը ծանուցանէ Պատրիարքարան թէ գաւառին մէջ բոլորովին անհետացած է դաւանափոխական ամէն շարժում:

— Նպաստից Յանձնաժողովը իր վերջին նիստին մէջ որոշեց է գումար մը ղրկել Խապայեան Սրբազանի որ Ատանայ կը գտնուի այս պահուս, յանձնարարելով որ այդ գումարը յատկանայ Աաանայի թեմերէն Օճազլըի խարխուլ եկեղեցւոյն շինութեանը:

— Աստուածաշունչի նոր տպագրութիւնը որուն ձեռնարկած է Էլմիսթանայ տպարանը, բաւական ընդունելութիւն կը գտնէ: Մի միայն Արմաւիրի մէջ Սաթուրեան վարդապետ 4000 ըութի հաւաքեր է Աստուածաշունչի գնման համար:

— Երուսաղէմէն կը գրեն թէ Ակնայ նախկին առաջնորդ Յակոբ վարդապետ Յորիկեան որ 3 տարի է ի վեր Ս. Քաղաքը կը գտնուէր, յունիս 9ին վախճանեց է 72 տարեկան հասակին մէջ և վանքին ձգեց է երկու մթերանոց ու մասնաւոր գումար մը:

— Կը լսենք թէ Պուլկարիոյ այցելու հովիւ Գեր. Պաղճեան Հօր կողմէ յանդիմանագիր շրջակում է Թաթար բազարճըգի շնորհունակին, ի վարձ իւր վերջին քարոզ ծառայութեան: Այսպէս վարդապետն է, որուն համար կըսուի թէ ասկէ առաջ հանգուցեալ Գէորգ վարդապետ Ռուսուգլեանի Ֆիլիպէի ժառանգորդներուն ձեռքէն առնել ուզած է անոր Լանջախաչը, ըսելով թէ «իմ անունս ալ Գէորգ է, տուէք ինծի զայն որ ես

գործածեմ» . բայց ժառանգորդք այդ արտառոց առաջարկը — որ խաբէութիւն ըսել է — մերժած են:

Բոժ. — Շիրտակը, Հայաստանեայց եկեղեցիին մէջ օտարին ոտնձգութիւնը դիւրացնող ասանկ շնորհունակ եկեղեցականի մը կուրծքն ալ կը վայլէ Լանջախաչեով զարդարել, անանկ չէ՞ վարդապետ . . .

— Վառնայի Որբախնամ ընկերութեան Գործ. Ժողովը կը յայտարարէ թէ Ռուսուգլի և Շումլայի մէջ ալ երկսեռ աղգայիններէ մասնաճիւղեր կազմուած է:

Փափաքելի է որ Պուլկարիոյ ուրիշ քաղաքներու աղգայինք ալ հետեին սոյն բարի օրինակին:

— Գահիրէէն մեզ կը գրեն յունիս 11 թուականով. — «Հոս Ռումանիաէն քահանայ մը եկած է, սոսկալի աղտոտ վարքի ու բարքի տէր: Եկաւ չեկաւ՝ դոյնը դուրս տուաւ. թէ՛ եկեղեցիէն չընդունեցին և թէ՛ ժողովուրդը չը համակրեցաւ: Հիմա տանը մէջ քար մը օծեր խորան է շինեց. այսօր Գրդ պատարագն է որ կընէ, ու յայտարարած է որ մկրտութիւն, պսակ և թաղում ալ պիտի ընէ: Այս բաներուն դէմ ոչ խօսող կայ և ոչ բողոքող. ամենքն ալ մայիշ (ինչո՞ւս պէտք) կըսեն կանցնին»:

— Ֆիլիպէէն ալ մեզ կը գրեն. — «Ինչպէս գիտէք, տեղւոյս աղգայիններէն Տ. Յակոբ Ա. դամեան դատ բացած էր վարժարանաց տնօրէն Վահան Դահրիմանի դէմ, իր զաւակը դահալի՞ծած ըլլալուն համար: Սոյն դատը վաղը, չորեքշաբթի, (յունիս 21) պիտի տեսնուի պատժական դատարանին մէջ: Տասնըութը վկաներու կոչնագիր ղրկուած է: Մանրամասնութիւնք յաջորդով»:

— Համակրելին Հայր Աւետիք Ալիշանի «Հայապատում» անուն մէկ նոր երկասիրութիւնը սկսած է տպագրուիլ ի Վենետիկ Ս. Ղազարու վանքին մէջ, քառածալ, մեծագիր ու շքեղ թուղթի վրայ, միանգամայն պատկերազազարդ:

Գործն է հաւաքումն պատմչաց հայոց՝ ժամանակագրական կարգաւ, սկիզբէն մինչև ժէ դար: Բաժնեգիրն է 30 ֆր. կանխիկ. տպագրութիւնը աւարտելէ ետքը 50 ֆր: Տասը օրինակի բաժանորդ գտնողին 1 օրինակ նուէր կը տրուի:

—Առաջիկայ օգոստոս ամսուն Բեդէրսպուրկի մէջ ցուցահանդէս մը պիտի կազմակերպուի Այվազովսկիի ծովանկարներէն, ու գոյացած հասոյթը պիտի յատկացուի հանգուցեալ ծովանկարչին գերեզմանին վրայ մահարձան մը կանգնելու:

ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

«Համալսարան»ի խմբագրութիւնը կը խնդրէ մեզմէ ծանուցանել թէ նոյն Հանգեսին Երգ թիւը 6րդին հետ միացած պիտի հրատարակուի քիչ ատենէն: Այդ 7րդ թիւին մէջ ամբողջ պրակ մը յատկացուած է եղեր Բարիկի Արուեստահանգեսին, որուն գլխաւոր շէնքերէն ու տեսարաններէն 12 շքեղ նկարներ զետեղուած են հոն: Ուրիշութեամբ կը ծանուցանենք նաեւ թէ «Համալսարան» յաջողած է իրեն յատուկ տպարան մը բանալ ի Բարիկ, որով հանգեսին տպագրութիւնը կ'ապահովուի: Նոր հասցէն է — Redaction du „Hamalsaran“

4 rue Ortolan (Place Monge) Paris

ԴԱՏԱՐԱՆԸ

Անցած օր սրճարանի մը մէջ մէկ քանի անձինք ջերմ վիճաբանութեան մը բռնուած էին, որ երթալով սուր կերպարանք մը առնելու երեւոյթն ունէր: Ունկնդիրներէ չեզոք անձնաւորութիւն մը բանակուողները հանդարտեցնելու մտօք ըսաւ.

—Պարոններ, մեք ինչն էք, կրկնօրը վերջացուցէք. վախճում այս ընթացքով խնդիրը մինչև դատարան տանիք:

—Հոգ չէ՛. դատարան ալ ինչանք նէ՛ դարձեալ իրաւունքը իմն է:

—Իմն է՛, իմն է՛: Կուզես նէ փորձենք:

—Ազէկ կըսէք ամա, նայինք այս տարի դատարանը ժամանակ պիտի ունենայ՝ ձեր դատին ալ նայելու:

—Ինչո՞ւ:

—Որովհետեւ վարդօն դատ բացած է Գուրպէթեանին դէմ. Գուրպէթեան ալ դատ բացած է վարդօնի պատասխանատուին դէմ. Ե. Թուղլաճեան դատ բացած է վարդօնի դէմ. վարդօն ալ դատ բացած է Ա. Փաշաճեանի, Թուղլաճեանի և Տիկնանց մասնաճիւղի դէմ: Գուրպէթեան դատ բացած է Երուանդ Սրմաքէշխանլեանի դէմ. Ճգնաւորեան դատ բացած է վարդօնի դէմ. Բեդըր Տրակուլէֆ ալ դատ բացած է իսաք Արվախի (վարդօն) դէմ:

—Զրոյէ՛ք, այս տարի վառնայի դատարանը ասոնցմով անկաթէ եղած է:

—Հապա ի՞նչ կ'արժեցիք:

—Ուրեմն կեցցե՛ն մերայինք:

Ս Ի Ր Ա Յ Ի Ն Կ Ա Յ Ծ Ե Ր

ԵՐԿՈՒ ԵՐԴՈՒՍԸ

Իշերներն անքուն, ծով ու ընկճուած,
Քամակքս ծած, ոսկերքս քույիկ,
Հագն ի կոկորդիս հագիս զայրուած
Հոն էի միշտ հոն, ուր մըշիկ մըշիկ
Յանկոյս իմ պատին
Ննջէր աղաւթին:

Պատկից եր դրկից. վառ վառ աչքերով
Երկինքէն ինկած լուսնիկ եր ան.
Մտիս, հոգոյս մէջ, խաղաղ սանքս քոյ
Տառապանիս եր ան: Քթիկն ու քերան
Այս գոյգը կուրծքիմ
Հոգիս վառեցիմ:

Բոյնը անշուք եր, քայց պարս եր ան.
Հոյանի, չքնաղ, տոխոս, վառաչոս
Ասդիկն եր ինքը, քոցի պահարան,
Ուր ես մասցիի ծովագետով կրոս
Զարնուիք արեւս
Թիթեռնիկի պես:

Կոր ու քոսը աչքերուն վրան
Վարսը ցիրուցան շրթաներ էին.
Քանի՛ ըղձայի վզիս աս շրթան
Օղակը ընել ու մէջը գրկին
Բաւումի յառէս
Օրեր սիրառէս:

Օր մըն ալ տեսնես, աղաւթին քոսը
Թոսա, քայց դարձաւ, քառեցաւ նորէն
Հոն՝ ուր գիշերներ զնայի անձկաւ
Համբոյր դրկելու... պատին ետեւէն
Այս, միշտ անօրէն
Պատին ետեւէն:

Սորվեցաւ քոյի, ու մէջ մ'ալ յանկարծ
Գնաց, ալ յեկա՛ւ հոգոյս իմ հասոյ.
Օրեր տարիներ լուսն եղաւ անդարձ.
Ինչպէս եր իմ սիրտ եղաւ վիրաւոր
Հառաչի ծուր
Կամ վշտի անքար:

Հայելիին մէջ տեսայ դաշկահար
Ինքզինիս աչերոյ կարծես ծերունի.
Ու ես այն օրէն կամփոյս յօժար
Երկու արքազան երդումներ ըրի:

Դիշերուան մութին, ժամը միշտ սասնին
ՀԱՄԱՐՈՒՐԵԼ պատին Հողը անձկագին.
Եւ առտուն կանուխ Ողորդ արտաքուխ
Օր ծոյին տեւոյոս ՀԱՌԱՋ մը խոսոյոս:

ԱՊՈՒ—ՆԱՏԱՐԱ

Պ Տ Ո Յ Տ

ԲԱՐԻՁԻ ԱՐՈՒԵՍՏԱՀԱՆԴԵՍԻՆ ՄԷՁ

5

Գերմանիոյ Տաղաւարդ.— Վեցերորդ դարու վերածնութեան ոճով հոյակապ շէնք մ'է Գերման պալատը որ կը բարձրանայ Նորվեկիոյ և Սպանիոյ տաղաւարաց միջև։ Արեւմտեան կողմէ կը տեսնուի գեղեցիկ աշտարակ մը, որ ակնախտիկ ցուքեր կ'արձակէ իր փայլուն քարերով եւ ոսկեզօծ դադաթով։ Շէնքին չորս ճակատները զարդարուած են այլաբանական պատկերներով, որք բնութեան չորս տարերքը կը ներկայացնեն։ Գետնայարկին մէկ սրահը կարմիր մարմարի խոնքերով շինուած է։ Պատերը զարդարուած են խորհրդանշաններով որք մարդկային կեանքի զանազան շրջանները ցոյց կուտան։ Կեդրոնը զետեղուած է Վիլհելմ Բ. ի մէկ կիսարձանը։ Յարակից սրահներն յատկացուած են գրեանք և լուսանկարչութեան բաժիններու։ Սպիտակ մարմարի խոնքէ շինուած փառաւոր սանդուխ մը կայ որ կ'առաջնորդէ առաջին յարկն ուր կը դտնուի տպագրութեան և գրեանք վերերեւել շահեկան հաւաքածոներ։ Ասոնց մէջ ուշագրաւ են Ալպէրդ Տիւրէրի գլուխ գործոցները։ Գունաւոր ապակիներով բաժնուած յարակից սրահի մը մէջ կը պարզուի ընկերական տնտեսութեան յատուկ ցուցահանդէսը։ Մեծին Ֆրեդէրիկի շրջանին համար չորս սրահներ յատկացուած են։ Ասոնցմէ մին կը ներկայացնէ մեծանուն իշխանին թանգարանն եւ կը պարունակէ անոր գործերուն կատարեալ մէկ ամբողջութիւնը։ Մնացեալ սրահներն ընդունելութեանց կը ծառայեն և կը պարունակեն զանազան գեղակերտ պատկերներ, Վադգոյի, Քարտէնի, Լանֆրէտի, Պուդէրի և Բադէրի հրաշալի արտագրութիւններէն։

Զուիցերիոյ Տաղաւարին մէջ է Սէն Բիէռ արուարձանին պանդոկը, ուր Զօր. Պոնաբարդ 100 տարի առաջ կանգ առած էր՝ Ալպեան լեռներն անցնելու և Իսուրիա մտնելու համար։ Այդ պատմական փոքրիկ պանդոկը ճիշտ իր ձևով ներկայացուած է։ Տաղաւարին Զուիցերիացի տնօրէնները հանդէս մը կազմակերպեցին հարիւրեամեակը տօնելու համար։ Զինուորական մեծ հիւանդանոցէն քանի մը զինուորներ որոնք Պոնաբարդի բանակին կը վերաբերէին ու գեռ կ'ապրին, կառավարութեան կողմէ արտօնուելով, ընդունեցին իրենց եղած հրաւերը։

Զուիցերիական բաժնին մէջ տարօրինակ մարդ մը կայ, բնիկ Թիրօլցի, որ այս պահուստ ամէնուն ուշագրութիւնը գրաւած է։ Երեւակայեցէ՛ք մարդ

մը, դէր ու ալեհեր, մարմինը բոլոր կուստ ու կըլոր, տաքատը ու բաճկոնակը՝ մութ գոյն, ու քիթը՝ տափակ։ Վերջապէս ծաղրելի տիպար մը, Բայց երբ բերանը բանայ, ալ փափաք չէք զգար խընդալու։ Նախ կը զարմանաք, յետոյ հիացումէ հիացում կը թռչիք։ Այլ մարդ մը չէ ան, այլ ճշմարիտ թռչուն մը որուն տեսակը որոշելը դժուար է։ Ղի սուր ձայնէն կ'անցնի բամբէ ձայնին, դիւրութեամբ, ճշտութեամբ և զարմանալի փափկութեամբ։ Հոն է արդէն իր գլխաւոր արժանիքը։ Մասնագէտներ անոր ձայնը բաղդատած են օֆաւորիսայի ձայնին հետ, տեսակ մը Քլիւդ զոր կը նուագեն լեռնաբնակները։ Թիրօլցի երգիչն անհուն, աննկարագրելի ազդեցութիւն մը յառաջ կը բերէ իր ունկնդիրներուն վրայ որք՝ զմայլանքի մէջ թաղուած՝ դժուար մտիկ կ'ընեն ուշագիւր, երբ երգիչն արդէն շատոնց աւարտած է իր երգը։ Թիրօլցիին հիանալի կերպով կը ճշտուէր ոստոստուն վալսեր, լեռնային նուազուն երգեր ու մեղմ անոյշ օրօրներ որոց արձագանգը կ'երթայ կը մարի շատ հեռուն։ Երգիչն իր կուրծքին վրայ կը կրէ բազմաթիւ միտալներ եւ բազմագոյն ժապաւէններ, չորս ստացած է մրցումներու և գիւղական տօներու մէջ։

(Շար.)

8.

ԳԵՏՆԱԲԱՐՇ ԶԳԵՍ ՏՆԵՐՈՒ ՎՆԱՍԸ

Հռոմի մէջ վերջերս գումարուած գիտական համաժողով մը լրջօրէն նկատողութեան առաւ կանանց զգեստները։ Համաժողովին անդամք միաձայնութեամբ ընդունեցին թէ երկայն քղանցքով զգեստները խիստ վնասակար են առողջութեան։ Տօքթ. Քասանկրանտի փորձով ցոյց տուաւ վտանգները։ Քանի մը երկայնաչգեստ կիներու յանձնարարեց ժամու մը չափ փողոցները պտտիլ։ Վերադարձին անոնց զգեստները մանրադիտական քննութեան ենթարկելով, տօքթօր Քասանկրանտի մանրէներու (միքոսկ) ամբողջ բանակ մը երեւան հանեց, որով ստուգուեցաւ թէ խանդակաթ մայրեր, ժամուան մը պտոյտէ ետք իրենց սիրելի մանկիկներուն օրօրոցին մէջ կը զետեղեն ինֆլուէնցայի, ժանտատենդի և ծիւրակոտի սերմեր։ Տօքթ. Քասանկրանտի այս պերճախօս փորձերուն վրայ, Հռոմի համաժողովին բոլոր անդամք միաձայնութեամբ դատապարտեցին գետնաքարշ Քիսսանկերը։

ՀԻՆԳ ՏԱՐԻ ԱՆԿՈՒՑԻԱԲԱՐ ԱԾԻԼԻՈՂ ԿԱՌԱՎԱՐԻՉԸ

Վիեննայի թերթերը կը գրեն թէ քանի մը շաբաթ առաջ Նատովերնայի դատարանը հինգամսեայ բանտարկութեան կը դատապարտէր Պէլօ անունով սափրիչ մը, որ ամբաստանուած էր լատիսլասի կառավարչին դէմ սուտ զրպարտութիւններ ըրած ըլլալու յանցանքով: Պէլօ՝ նոյն կառավարիչը 5 տարի առանց սանդիմ մը առնելու ածիլելէն զգուած, առնելիքը կը պահանջէ ու վերջի վերջոյ առած մերժողական պատասխանին վրայ ինքն ալ ածիլելը կը դադարեցնէ: Ասոր վրայ կառավարիչը բարկացած՝ կը սկսի Պէլօի չարիք հասցնել. «այսօր խանութիդ առջին ալէկ չես աւելր, ապակիները քիչ մը փռչոտած են. կոնքերը անմաքուր կերևան. վրձինները աղտոտածի պէս են. պատին վրայ ճանճերը կը թառին» ըսելով խեղճ մարդէն տուգանքներ կ'առնէ. ասկէց զատ, կառավարական պաշտօնեաներուն ալ կարգիլէ Պէլօին խանութը յաճախելը, կարգիլէ նաեւ քաղաքապետական բժիշկին որ վերաբուժական գործողութիւն մը կատարած ատեն Պէլօն իբր օգնական հետը չի տանի: Ու իբր թէ քիչ էին այսչափ չարիք, տուրքերու վարչութեան վրայ ալ ազդեցութիւն բանեցնելով, սափրիչին տուրքը տասնապատիկ աւելցնել կուտայ:

Պէլօ քանի մը անգամներ կը բողոքէ ձեռնհաս դատարանին, որ թէն կ'որոշէ աւելցած տուրքերը թեթեւեղել, բայց կառավարիչը նոյն որոշումը ամիսներով գործադրել չի տար, ու տուրքերու հաւաքիչներ Պէլօյի ունեցած կարասիքը ու գոյքերը կը գրաւեն:

Կառավարիչը խեղճ սափրիչին հասուցած այսչափ վնասներովը տակաւին գոհացած չէր. որովհետեւ կիմանար թէ հանրային դատաստանը՝ ժողովուրդը «հինգ տարի անկուտիւրաբար ածիլող, անունը կուտար իրեն ու պէտք եղածէն աւելի զինքը կը բամբասէր. ուստի, եթէ ձեռքէն գալու ըլլար, մինչև իսկ կախաղան հանել պիտի տար սափրիչը: Բայց վերջապէս արդարութիւնը վրայ կը հասնի. Սթանիսլօի վճռաբեկ ատեանը անցեալ շաբթու սափրիչը անմեղ կը յայտարարէ, միևնոյն ժամանակ դատապարտելով կառավարիչը հատուցանելու հինգ տարուան ըրած պարտքը ու խեղճ Պէլօյին պատճառած վնասները. ասկէց զատ, իբր զեղծ կառավարիչ անոր պաշտօնանկութիւնը կը պահանջէ:

Երբուեալ դատաւորաց բարձրագոյն ատեանը վճռաբեկ ատենին սոյն պահանջը կը վաւերացնէ ու կառավարիչը գրամները համբիւնէ ետքը, հիմա ալ մօրուքը ձեռք առած քաղքին փողոցները վեր վար կը չափէ եղեր:

(Ալ ուզածին չափ թող չափէ:)

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

Կէչէնտէ Պուլկարիա շէհրլէրինտէն պիրինտէ՝ Թաղական աղալար էհալիյի Ընդհ. Ժողովա տալէթ իտուպ, կոսթոթին Ատենապետ՝ մէքթէպ պիւտճէսինին իրատը՝ մէսարիֆի գաւայամազ պիր հալտէ պուլունտուղունու շէօլէճէ պէյան իթմիշ տիր.

Էյ աղալար, կոսթոթինլէր վէ միւսիւլէր,

Ուզուն սէօլիւն գըսասը, էվտէքի բաղար չարշըյու ույմատը: Հէր նէ գատար մէմուրէյէթէ կէշտիղիմիզ վազըթ սիզլէրի պօլլամար ըլա թէէմին իթմիշ իտիք մէքթէպին սէնէլիք 15.000 Փր. մէսարիֆինի թէտարիք իթմէյէ իսէ տէ, հայֆա քի լաֆ ըլա բիւվ բիշմէյօր, վէ՝ շէօլէ էօլէրիլ, պէօլէ պիշէրիլ տէտիքլէրիմիզ հէփ խէյալաթ ըմըշ: Աէ վագաա իշիմիզաէն պիր գաշլարը գուրնազ գօրուպ՝ պէճէրէմէյէճէիմիզի ֆարգ իտուպ եօլ եագըն իքէն իշտէն չէքիլմիշլէր իսէ տէ, պիլ՝ «տայանալըմ, աման տայանալըմ» տէյուպ պու կիւնէ գատար տայանապիլտիք.

Պիր սէս — Տայա՛ն Ղարապիտ աղա:

(Սօլ քարաւճսան ֆա'ն ֆա'ն)

— Իմտի մաէթթէսիւֆ պէյան իտէրիզ քի՝ պիլ իշտէն չէքիլմիշլէր վէ պիւտճէսին սէնէվի 5.000 Փրանք աշըղընը գաւամազ իշիւն պիլտէն սօնրա կէլէճէք օլանալարա շու ագըլանէ նասիհաթը վէրիօրըզ, ետնի. . .

Մուխալիֆ պիր զաթ. — Եանիյի Նիգօլիյի պէրթաւրաֆ էտիւպ՝ օրայա պիր նօգթա գօյունուզ, չիւնքի ճէվապ վէրէճէիմ:

— Պուլունուն:

— Թաւիթ գապուլ իթմէզ պիր չարբըզլըզլա իշի պու հալէ կէթիթիքաէն ոօնրա պիրտէ խալիֆլէրինիզէ նասիհաթ մը վէրմէյէ գալըզընօրսընըզ: Պու նասիհաթը բէնտի բէնտինիզէ վէրէյիտինիզ օլմա՞զ մը իտի:

— Էֆէնտիմ, թէրզի իւսթիւնի տիքէմէզ, էմր իթմէք պաշգա, չալըշմազ պաշգա:

— Տէմէք, սիզ եալընըզ էմր իթմէք պիլիթօրսընըզ:

— Թաղականլըղըն պիրինճի վազիֆէսի օ տէյիլ մի եա:

— Պու գատար սէնէլէրտէն պէրու 8-10.000 Փըրանքա իտարէ օլան մէքթէպիմիզին պիւտճէսինէ 5.000 Փր. զամմ իթմինիզ իսէ, նէ՞ մուհասէնաթ հասըլ օլտու. շու պիր սէնէ զարֆընաա չօճուգլար փիլիսոփա՞յ մը օլտուլար, մարգարէ մի բէսիլտիլէր.

— Մուհասէնաթը շու օլտու քի բէնտի բառթիլէրինէ մէնսուպ պիր իքի արթիլէ վարժապետ գալըլտը:

— Էյի ամա, պուրասը անկելանոց մը տըր:

— Իսթէր անկելանոց օլտուն իսթէր կանգնելանոց, օլմուշ պիթմիշ պիր շէյ տիր. չարէ եօգ:

— Էյ շիմտի նէ՞ եաբաճագլար.

— Նէ՞ մի եաբաճագլար. իշ պաշընա կէշտիքլէրի վագըթ վէրմիշ օլտուգլարը վատլարընը իճրա իտէճէքլէր. յիլլէթ պու 5000 Փրանքըզ պօրճու գապուլ իթմէզ:

Պու ընդհ. Ժողովու վագթըլլա թէճէմիւ իտիւպ պիւտ-
ճէյէ 5000 Փրանք դամմ իտէճէքլէրինի էհալիյէ պէ-
յան վէ օնուն բէյինի ալտըգտան սօնրա իշէ պաշլամա-
լը իտիլէր բի՝ միլլէթ տէ շիմտի պու պօրճու թանըսըն:

Սէսլէր—էվլէթ, Գապուլ իթմէյիզ. պու պօրճու
տիւշիւնմէյէրէք իտէնլէր թաղմին իտէճէք տիր:

—Պէ ճանըմ, շիմտիլիք սիզ ալէլ հիսապ շու
պիզիմ իսթիֆամըզը Գապուլ իտին տէ՝ սօնրա պօրճու
ռա՝ իսթէր իսթէմէզ՝ ատէթտէն օլտուղու իւզրէ Գապուլ
իտէճէքսինիզ. չիւնքիւ օլմօւշ պիթմիշ պիր շէյ տիր.
պօրճ՝ միլլէթ սանտըզը նամընա տըր: Գապուլ իթմէյիզ
տէմէք պօշ սէօշ տիր—տէյէրէք մէճլիստէն չըզըպ
կիտէրլէր:

Հաղըրուն շաշա Գալըր:

Պիր իհթիյար—Աղալա՛ր, նէ՞ շաշլօրսընըզ, պու
ատամլար բէք հագլը տըրլար: Գապուհաթ՝ միլլէթ իշ-
լէրինտէն խապէրտար օլմայան վէ մէքթէպ իտարէսի
պիլմէյէն պու կիպի զնոսա զնոսինլէրին եալընըզ բէլլէսի
գուլաղը եէրինտէ օլմասընտան ալտանըպ Բուէ վէ-
րէնլէրին տիր:

(Աղըրչարս վէ պուալօ՛. պուալօ՛)

Թ.

Ծ Ի Ծ Ա Ղ

Օր մը շուարճախօս Անգլիացի մը գնաց
թաշկինակ մը գնելու որուն վրայ Ագլիոյ նշանա-
ւոր մօրդոց գէմքերը տպուած էին. երբ իրեն
հարցուցին թէ ինչ պիտի ընէ, պատասխանեց որ
այդպէսով միայն կրնայ իր ֆիքթ բարձր դասա-
կարգին մէջ մտնել:

—Ա՛հ օրիսդ, մեծ պատիւ կընէք ինծի ա-
տանկ ուշադրութեամբ զիս դիտելով:

—Որովհետեւ պարոն, շատ կը նմանիք իմ
մէկ ազգականիս . . .

—Սէնլի մեծ պատիւ մը.

—Որ աւաղ, յիմարանոցին մէջ է:

Տիկին մը հարցուց մուրացկանի մը.

—Անցած օր քեզի լաւ կոշիկ մը տուի նէ
ինչ ըրեր.

—Ծախսեցի տիկին, որովհետեւ այն նոր կոշիկ-
ները քիճարեթիս արգելք եղան.

Տիկին մը հարցուց դարամտիկ չարաճճի մը
թէ զինքը քանի՞ տարեկան կը կարծէր.

—Տիկին, հիմա այսպէս հագուած՝ 30 տարե-
կան կ'երեւաք, առաւօտուն կիսայարգտը վիճակի
մէջ՝ 45, իսկ վստահ եմ թէ գիշերն ալ 55:

Կրակ կայ, կրակ կայ, կը գոչէին քաղաքի մը
մէջ: Կին մը պատուհանը բանալով հարցուց թէ
ո՛ւր էր կրակը:

—Կաթովաճառին խանութը:

—Ուրեմն հանգիստս չը խռովեմ. ջուրը իր
մէջն է:

Տան մը մէջ

Այրը—Ինձի նայէ՛ կնիկ, ես ուրիշներուն
պէս երկու երեսով չեմ.

Կինը—Իսաապէթ, ունենալէդ ետքը մէկ հա-
տըն ալ կ'օգտէ . . .

ՅԵՐԱԳԻՐ

(Աժանս Բոժոժիկ եւ Ընկ.)

Քամաթգա

Մեր թուարանութեան ուսուցչուհին՝ քննութեան
առթիւ կանխաւ հարցուիներ որոշած էր իւրաքանչիւր
աղջկան, լրջօրէն պատուիրելով անոնց որ ամեն մէկը իրեն
ուղղուելիք հարցման պատասխանը միայն սերտէ. Ահա այս
սխաթեմով կատարուելու վրայ է թուարանութեան հար-
ցաքննութիւնը, որ ի հարկէ գոհացուցիչ արդիւնք կ'ար-
տագրէ:

Ուլիցա Արմէնսգա

Մեր վարժարանի տղոց այնինչ կարգի աշխարհագր-
ութեան քննութիւնն ալ նոյն սխաթեմով կըլլայ կոր.
Անցեալ օր աշակերտ մը, որ իրեն համար որոշեալ հարցու-
մին պատասխանը ճորձ-ջուր գոց ըրած էր, մախառայի
պէս ըսած ատենը «սահման» բառին առջեւ կեցաւ, ու չի
կրնալով անկէ ետքի բառն յիշել՝ նոյն պատասխանը
ծայրէն սկսաւ կրկնել, որպէս զի Բ. անգամին միտքը
բերէ. Ա՛լ որո՞ւ վրայ հօգի կը մնար. դժուարաւ բռնե-
ցինք խնդուքնիս:

Դ

Отговорникъ Ж. ИВ. ЖЕКОВЪ
Печатница „Взаимность“ — Варна.